ընդհանրանալ Դեղարդայ վանք կոչումը։ Մեր աւելի հին աւանդութիւնների մէջ չունինք որ եւ է տեղեկութիւն նրանց իրական գոյութեան մասին. Նոյեան տապանի կտորի աւանդութիւնը կապուած է Յակոբ Մծբնայ հայրապետի առասպելախառն պատմութեան հետ, որ շարականի նիւթ է դարձել նոյն հայրապետին նուիրուած կանոնի մէջ. սակայն շարականը հների կարգին չի պատկանում. ըստ հեղինակների ցանկի ոմանք վերագրում են այն Շնորհալուն (*)։

Դեղարդի ծագման աւանդութիւնը Հայաստանում կապուած է Թադէոս առաքեալի վկայաբանութեան հետ, որ շարականի մէջ է մտած արդէն 1159 թուին գրուած մի ձեռագրում (**), Գրիգոր Դ. եւ Ներսէս Շնորհալի կաթուղիկոսների ժամանակ։ Նոյն աւանդութիւնը կրկնուած է Վանականի և Վարդանի անունով մեզ հասած գրութիւնների մէջ (***). յամենայն դէպս Վարդան իւր պատմութեան մէջ յիշում է նորա իրական գոյութիւնը, որպէս մի անցեալ ունեցող սրբութիւն, որ պէտք է զանազանել Խաչակրաց արշաւանքի ժամանակ Անտիոքում գտնուած և ապա Ալէքս կայսերն անցած գեղարդից (*). ԺԴ. դարում նա ունի իւր յատուկ շարականը Վարդանի կողմից երգուած, ամենայն հաւանականութեամբ հէնց Պռոշ իշխանի շինած պահարանի առթիւ (**)։ Ճառեր եւ շարականներ գրւում էին, երգւում սրբերի եւ տաճարների նաւակատեաց տօներին, այս դէպքում սրբութեան փառաւորութեան՝ պահարանի շինութեան առթիւ։ Վարդան բարեկամական կապեր պիտի ունենար Պռոշի հետ. 1268 թուին նա վերջացրեց իւր Դանիէլի մեկնութիւնը Աղջոց վանքում (***), որ Խաղբակեան մի ճիւղի հոգեւոր կեդրոնն էր եւ ոչ հեռու Գեղարդից. 1270 թուին գումարուած Զագաւանից ժողովի ղեկավարն էր Վարդան, հովանաւորութեամբ նաև Պռոշ իշխանի (****), իսկ 1268 թուին շինուեց պահարանը։ Կարծում ենք նոյն իսկ, թէ պահարանի արձանագրութիւնը Վարդանի գրածը պիտի լինի, որ սովորական արձանագրութիւն չէ, այլ այդ սրբութեան մեծարանքի եւ պաշտաման բանաստեղծական մի արտայայտութիւն իւր առաջին մասով, որ Պռոշ իշխանը ինքը չէ գրել, անշուշտ, ինչպէս վերջաւորութիւնն էլ ցոյց է տալիս, այլ նորա մերձաւոր անձ-

Պատկեր 154.

(*) Շարական, Էջմիածին, 1861, եր. 528։ Հեղինակների ցանկը սկզբում։

(**) Սահակ վարդապետ Ամատունի. Պարականոն կամ անվաւեր շարականներ. Վաղարշապատ, 1911, 31 և շար.։ Միքայէլ Ասորին եւս քիչ յետոյ իւր Յաղագս քահանայական կարգաց ճառի մէջ յիշում է «Եւ գեղարդն աստուածամուխ պսակաւն փչեայ ի Թադէոսէ բերեալ, և կայ անդէն ի Հայս ի պարծանս ազգին և ի փառս Աստուծոյ». Միքայէլ Ասորի, Պատմ., Երուսաղէմ, 1870, եր. 600։ Սոփերք հայկականք, Վենետիկ, Ը. 59։

(***) Ձեռ. Էջմ. № 2496, 356բ., 2179/2166, 310բ., և 753 Նժ. 404բ.։

(*) Վարդան, 147/8։ Գանձակեցի, 143։

(**) Ամատունի, Պարականոն շարականներ, 130, և Շահխաթ. Ա. 48։ Ալիշան, Այրարատ, 348։

(***) Ձեռ. Էջմ. № 2049, 359բ.։ Ալիշ. Հայապատում, 383։

(****) Տես մեր Զագաւանից ժողովը, Շողակաթ, Հայագիտական ժողովածու, Վաղարշապատ, 1913, 22։